Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 2-ի նյութական իրավունքի բաժնի 8"17-րդ 10"27-րդ, 25"46-րդ , 1"9-րդ , 24"45–րդ , 27"52-րդ , 23"43-րդ, 2"10-րդ , 15"31-րդ հարցերը, ինչպես նաև դատավարական իրավունքի բաժնի 7"17-րդ հարցը

Նյութական իրավունք

17-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի միավորը բարձրացվում է 1 միավորով, հաշվի առնելով սփուգման հանձնաժողովի կողմից թույլ տրված տեխնիկական վրիպումը:*

27-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները խնդրի ձևակերպման մեջ տեղ գտած անճշտության պարագայում, ընդունելի են հանձնաժողովի համար, ուստի տրվում է 1 միավոր:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի հավակնորդին տրվում է 1 միավոր:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

52-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները չի բխում քրեական օրենքի նորմի մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

43-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրի պայմաններից, երկակի մեկնաբանման հիմք չի կարող ցալ մուտք գործելով եզրույթը: Այլ կերպ՝ հավակնորդի պնդումները չեն բխում խնդրի փաստական հանգամանքներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

31-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք սպանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև ոչ նյութական առավելությունը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

Դատավարական իրավունք

17-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի ըստ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանության կապակցված կարող են կիրառվել սպորագրությունը չհեռանալու մասին և գրավը : Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***2286*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 16 միավորը բարձրացնել 6 միավոր՝ արդյունքում արձանագրել 22 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ